ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/58500/02/22
2024թ.

ՈՐՈՇՈՒՄ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«04» սեպտեմբերի 2024 թվական ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
զեկուցող Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ս. ՄԵՂՐՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

քննելով ըստ Միխայիլ Թումասյանի հայցի ընդդեմ Գոհար Հարությունյանի՝ համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, թիվ ԵԴ/58500/02/22 քաղաքացիական գործի ենթակայության հարցը,

ՊԱՐԶԵՑ

Դիմելով դատարան՝ Միխայիլ Թումասյանը պահանջել է իրեն ճանաչել Երևան քաղաքի Աջափնյակ, Վահագնի թաղամասի 3-րդ տեղամասի Արաքս փողոցի թիվ 29 «Վան-1» մոդելի անավարտ, կիսակառույց մենատան նկատմամբ որպես համատեղ սեփականատեր:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 19.06.2024 թվականի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ և նշանակվել է նախնական դատական նիստ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն. Հարությունյանը 18.07.2024 թվականին որոշում է կայացրել գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին:

Գործը 20.08.2024 թվականին հանձնվել է նույն դատարանի դատավոր Ա. Ջավախյանին:

Սնանկության դատարանի դատավոր Ա. Ջավախյանը 22.08.2024 թվականին կայացրել է «Ենթակայությունը որոշելու նպատակով քաղաքացիական գործը ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին» որոշում:

Թիվ ԵԴ/58500/02/22 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 30.08.2024 թվականին:

Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ԵԴ/58500/02/22 քաղաքացիական գործի ենթակայության հարցը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված դեպքերում դատավորը ենթակայության հարցի որոշման համար գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին կայացված որոշումը ուղարկում է գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վկայակոչված իրավադրույթներից հետևում է, որ գործն ըստ տարածքային ընդդատության կամ ըստ ենթակայության ստացած դատարանը գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը համաձայն չլինելու դեպքում, յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու

մասին՝ այդ որոշումն ուղարկելով գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Իր հերթին, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործն ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (այսուհետ՝ դատարան): Սնանկության գործը վարվում է դատավորի կողմից միանձնյա:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին ՀՀ օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր):

Սույն մասով սահմանված՝ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած վեճը ենթակա է քննության սնանկության դատարանում որպես առանձին քաղաքացիական գործ՝ անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից:

Վերոգրյալ իրավական նորմի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիաիրավական վեճը սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործ ենթակա է քննության միայն հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

1. քաղաքացիական գործով վեճը պետք է ծագած լինի՝

ա) կամ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների վերաբերյալ,

բ) կամ երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի վերաբերյալ,

գ) կամ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ, անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից, բացառությամբ

սնանկության գործով կառավարչի կողմից ներկայացվող հայցերից կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերից:

2. նշված յուրաքանչյուր դեպքում քաղաքացիական գործով ծագած վեճը պետք է ազդեցություն ունենա սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

Սույն քաղաքացիական գործով դիմելով դատարան՝ Միխայիլ Թումասյանը պահանջել է իրեն ճանաչել Երևան քաղաքի Աջափնյակ, Վահագնի թաղամասի 3-րդ տեղամասի Արաքս փողոցի թիվ 29 «Վան-1» մոդելի անավարտ, կիսակառույց մենատան նկատմամբ որպես համատեղ սեփականատեր:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 19.06.2024 թվականի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ և նշանակվել է նախնական դատական նիստ:

Թիվ ՍՆԴ/1501/04/23 սնանկության գործով Սնանկության դատարանի 28.03.2024 թվականի վճռով սույն քաղաքացիական գործով պատասխանող Գոհար Հարությունյանը ճանաչվել է սնանկ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն. Հարությունյանը 18.07.2024 թվականին որոշում է կայացրել գործը Սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին, պատճառաբանելով, որ՝

«*Սույն դեպքում Միխայիլ Թիվանի Թումասյանի կողմից հայցադիմում է ներկայացվել ընդդեմ Գոհար Մարտինի Հարությունյանի՝ համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին:*

Գործի նյութերով հիմնավորվել է նաև, որ պատասխանող Գոհար Մարտինի Հարությունյանը ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Ա. Ջավախյան) 05.06.2023 թ. թիվ ՍՆԴ/1501/04/23 օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է սնանկ:

Գոհար Մարտինի Հարությունյանի վերաբերյալ վերը նշված սնանկության գործը համաձայն, «Դատալեքս» տեղեկատվական համակարգում զետեղված տեղեկությունների, սույն որոշման կայացման պահի դրությամբ դեռևս գտնվում է քննության փուլում:

Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով ներկայացվել է վիճելի գույքի համասեփականատեր ճանաչելու պահանջ: Դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական գործը պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործ է, որը ենթակա է քննության Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում»:

Սնանկության դատարանի դատավոր Ա. Ջավախյանը, Գոհար Մարտինի Հարությունյանի սնանկության վերաբերյալ սնանկության գործն այլևս ավարտված լինելու պայմաններում, 22.08.2024 թվականին որոշում է կայացրել «Ենթակայությունը որոշելու նպատակով քաղաքացիական գործը ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին» որոշում, միայն այն պատճառաբանությամբ, որ՝

«...թիվ ՍնԴ/1501/04/23 սնանկության գործն՝ ըստ «Նյու Ինֆո» ՍՊ ընկերության դիմումի Գոհար Մարտինի Հարությունյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին սնանկության գործով ՀՀ սնանկության դատարանի 2024 թվականի հուլիսի 19-ին կայացրել է սնանկության գործն ավարտվելու վերաբերյալ վճիռ: Այսինքն՝ թիվ ՍնԴ/1501/04/23 սնանկության գործն այլևս չի գտնվում ՀՀ սնանկության դատարանի դատավոր Ա. Ջավախյանիս վարույթում: Հետևաբար՝ դատարանը գտնում է, որ բացակայում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնակարգերի հիման թիվ ՍնԴ/1501/04/23 սնանկության գործի շրջանակներում թիվ ԵԴ/58500/02/22 քաղաքացիական գործը քննելու հնարավորությունը»:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև սույն գործի փաստական հանգամանքների համատեքստում Գոհար Հարությունյանի դեմ ներկայացված հայցապահանջն իր բնույթով համապատասխանում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջներին ու Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն. Հարությունյանը 18.07.2024 թվականի որոշմամբ իրավացիորեն անձանագրել է, որ «*քաղաքացիական գործը պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործ է, որը ենթակա է քննության Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում»,* այնուամենայնիվ, հիմք ընդունելով այն, որ թիվ ՍնԴ/1501/04/23 սնանկության գործով ՀՀ սնանկության դատարանի 2024 թվականի հուլիսի 19-ին կայացվել է պարտապան Գոհար Մարտինի Հարությունյանի սնանկության գործն ավարտելու վերաբերյալ վճիռ և առկա չէ Գոհար Մարտինի Հարությունյանի սնանկության վերաբերյալ սնանկության գործ, որի շրջանակներում հնարավոր կլիներ քննել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող քաղաքացիական գործ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործն այլևս չի կարող քննվել Սնանկության դատարանում, ուստի թիվ ԵԴ/58500/02/22 քաղաքացիական գործն ըստ Միխայիլ Թումասյանի հայցի ընդդեմ Գոհար Հարությունյանի՝ համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

ՈՐՈՇԵՑ

Թիվ ԵԴ/58500/02/22 քաղաքացիական գործն ըստ Միխայիլ Թումասյանի հայցի ընդդեմ Գոհար Հարությունյանի՝ համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

Նախագահող ***Գ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Զեկուցող ***Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ***

Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ս. ՄԵՂՐՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ